ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե-4594

«13» հունիսի 2024թ.

«ԱՐԴՄՈՐ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Զ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Աբելյան փող., 6/4 շենք)

«ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Գ.-ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Վարդանանց փակուղի 8)

«ԼԱՎԱՆՆԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 3 թղմ., շ. 30, 26)

«ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Աբովյան 3-րդ մ/շ 12/27)

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«ԱՐԴՄՈՐ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ

Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ Հավելված N 1, սխալ է լրացված պատվիրատուի անվանումը:

«ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ

Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ Հավելված N 1, 1) կետի 3-րդ տողում լրացված չէ մասնակցի անվանումը:

«ԼԱՎԱՆՆԱ» ՍՊԸ

Ընկերության կողմից 14-րդ չափաբաժնի մասով eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ հրավերով հիշյալ չափաբաժնի տեխնիկական բնութագրով սահմանված է՝ «հզորությունը՝ 550W», այնինչ ընկերության կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «հզորությունը՝ 600W»:

«ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ

Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ Հավելված N 1, կազմված է հրավերի պայմաններին անհամապատասխան, մասնավորապես՝

ա) մասնակցի՝ ռուսերեն լեզվով անվանման փոխարեն լրացված է մասնակցի՝ հայերեն լեզվով անվանումը:

բ) թերի է լրացված 1) կետը, մասնավորապես՝ բացակայում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստմանը վերաբերող հատվածը, ընթացակարգի ծածկագիրը և մասնակցի անվանումը:

գ) ավելորդ է 3) կետի երկրորդ պարբերությունը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11 կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի հունիսի 14-ը ներառյալ Համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Մ.Հայրապետյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788